q Հաստատված է
«ՍԵՕԻԳ-ՇՀԾՁԲ-11/9»» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերով
գնումներ կատարելու ընթացակարգի հանձնաժողովի
2014թ. «փետրվարի» «24»-ի թիվ «1» որոշմամբ

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ

ՀՐԱՎԵՐ

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/9» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կարիքների բավարարման համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել Գնումների աջակցման կենտրոնի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 4-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով նախատեսված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված համակարգչային ծառայությունները: Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում « ՍԵՕԻԳ-ՇՀԾՁԲ-11/9»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտը անհրաժեշտ է ներկայացնել www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով մինչև 2014թ. մարտի 10-ը, ժամը՝ 15^{00}-ը:

Հայտերը կբացվեն 2014թ. մարտի 10 -ին, ժամը՝ 15:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում «Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կարիքների համար համակարգչի և սարքավորանքի նորոգման և սպասարկման ծառայությունների ձեռքբերում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում ***(Հավելված N 5)***, ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ ***(Հավելված N 5.1):*** Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և անուղղակի հարկեր ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտը անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/9» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

«Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի էլեկտրոնային փոստի հասցեն է՝

secig@mail.ru

Գնումների պատասխանատու՝ Աննա Մխիթարյան

Հեռախոս՝ (095-95-81-05/:

Պատվիրատու՝ «Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N <<----------->>

ք. Երևան <<__>> _____ 2014թ.

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Սպորտի և երիտասարդական ծրագրերի գրասենյակ» պետական հիմնարկը (այսուհետև՝ Պատվիրատու), ի դեմս տնօրենի պաշտոնակատար Մ. Սարգսյանի, և ---------- (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ---------- ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել փաստացի մատուցած Ծառայության համար՝ համաձայն N 3 վճարման ժամանակացույցի:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագրի կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ կատարողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին և վճարման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է ------- ---------- (----------) ՀՀ դրամ գնի սահմաններում, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու,իսկ պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

Կանխավճարի մարումն իրականացվում է սույն պայմանագրով նախատեսված արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N3 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա

վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014թ. դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք

կիանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.5 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2, N3, N4 հավելվածները՝ բաղկացած ------- էջից, հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ	Հասցե՝

Հասցե՝ Ք.Երևան, Սարյան 22, 16-րդ հարկ
Գործ հասցե՝ ք. Երևան, Աբովյան 9
ՀՎՀՀ 02599765
հ/հ 900011111110
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Տնօրենի ժ/պ՝

---------- Մ. ՍԱՐԳՍՅԱՆ

Կ.Տ.

ՀՎՀՀ
Բանկ՝
Հ/Հ

Կ.Տ.

Հավելված N 1

---------- —— -2014 թ. կնքված

N ՍԵՇԻԳ-ՇՀՇՁԲ-11/9 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

	Ծառայության անվանումը	Չափման միավոր	Անվանումներ
1	Համակարգչի նորոգում և սպասարկում	Հատ	MB նորոգում
			MB փոխարինում, ներառյալ Ասուս Ինտել 31 չիպսեթ, ՊՍԻ-էքսպ (ASUS Ինտել 31 chepset, PCI-Exp) կամ համարժեք
			CPU փոխարինում, ներառյալ Քորե 2 Դուո Ե 7300 (2.66 ԳՀց), 3072, 1066 ՄՀց (Core 2 Duo E 7300 (2.66Hz), 3072, 1066 MHz) կամ համարժեքը
			RAM փոխարինում, ներառյալ ԴԴՌ2 1024Մ 667/800 ՄՀՑ (DDR2 1024M 667/800MHZ) կամ համարժեքը
			SVGA փոխարինում, ներառյալ Նվիդիա Ջիֆ Ջիֆի 1 Գբ ՊիՍիԱյ-էքսպ (Nvidia GF GT 1Gb PCI Exp) կամ համարժեքը
			HDD փոխարինում, ներառյալ ՀԴ 500գբ ՍԱՏԱ, 7200 ռպմ (HDD 500Gb SATA, 7200 rpm) կամ համարժեքը
			DVD-RW փոխարինում, ներառյալ ԴՎԴ-ՌՎ (DVD-RW) կամ համարժեքը
			Սնուցման բլոկի փոխարինում, ներառյալ սնուցման բլոկ Պ4 պահարանի համար 450Վտ

			(Power suply unit for P4 Case 450w) կամ համարժեքը
			Ցանցային քարտի տեղադրում, ներառյալ ցանցային քարտ 10/100/1000 Դ-լինկ (D-link 10/100/1000) կամ համարժեքը
2	Մանիտորի նորոգում և սպասարկում	Հատ	ԼՍԴ-ի լամպի փոխարինում, ներառյալ լամպը 17
			ԼՍԴ-ի լամպի փոխարինում, ներառյալ լամպը 19
3	Լազերային տպիչի նորոգում և սպասարկում	Հատ	Լիցքավորում, ներառյալ տոները ՀՊ ԼՋ 5L/6L (Քենոն ԵՊ Ա)/1100 (Քենոն ԵՊ 22), 1200 (Քենոն ԵՊ 25) /1150/1160/1320/2015 կամ համարժեքը (HP LJH 5L/6L9 (Canon EP A) / HP LJ 1100 (Canon EP 22)/ HP LJ 1200 (Canon EP 25)/1300/1150/1160/1320/2015) կամ համարժեք
			Վառարանի թերմոթաղանթի փոխարինում, ներառյալ թերմոթաղանթ (HP/Canon կամ համարժեք)
			Թմբուկի փոխարինում առանց լիցքավորման, ներառյալ թմբուկ Laser jet 1100/5L/6L/4L/4P/1200/1150/1300/2100/4000 (Canon LPB 800/810/1120/2900/1210) կամ համարժեք
			Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում, ներառյալ թղթի տրման ռետինե լիսեռ (HP LJ Canon LBP կամ համարժեքը)
4	Սկաների նորոգում և սպասարկում	Հատ	Վերանորոգում (առանց պահեստամասերի)
			Լամպի փոխարինում, ներառյալ լամպը Ա4
5	Պատճենահանման սարքի նորոգում և սպասարկում	Հատ	Վերանորոգում (առանց պահեստամասերի)
			Տոների լիցքավորում, ներառյալ Քենոն N P7161/iR1600/iR2016 (Canon N P7161/iR1600/iR2016) կամ համարժեքը պատճենահանման համար
			Վառարանի տեֆլոնե լիսեռի փոխարինում, ներառյալ վառարանի տեֆլոնե լիսեռ Canon 1215/6216/6317/1520/7161/1600 կամ համարժեքը
			Վառարանի ֆետրե լիսեռի փոխարինում, ներառյալ վառարանի ֆետրե լիսեռ Canon 1215/6216/6317/1520/7161/1600/2016/2018 կամ համարժեքը
			Թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկ Canon FC կամ համարժեքը
			Թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկ Canon 1215/6216/6317/1520 կամ համարժեքը
			Մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակ Canon 1215/6216/6317/1520/7161/1600/2016/2018 կամ համարժեքը
			Սկաների լամպի փոխարինում, ներառյալ լամպը

			A4 կամ համարժեքը
			Վառարանի լամպի փոխարինում, ներառյալ լամպը
			Շարժիչի շարժաբերի ատամնանիվի փոխարինում, ներառյալ ատամնանիվը
6	Քարթրիջի լիցքավորում	հատ	Լիցքավորում լազերային տպիչների, ներառյալ տոները, Canon 703, Q 26 12A, կամ համարժեքը

- *Գնումը կատարվում է վերանորոգման անհրաժեշտության դեպքում*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության <<Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկ
Հասցե՝ Սարյան 22, 16-փդ հարկ
Հեռ. /095 95-81-05/
Հ/Հ 900011111110
ՀՎՀՀ 02599765
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Տնօրենի
Պաշտոնակատար_____Մ.Սարգսյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Հավելված N 2

<< >> << >> 2014թ. կնքված

N ՍԵԾԻԳ-ՇՀԾՁԲ-11/9 ծածկագրով գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	Ծառայության			Նախատեսվում է մատուցել 2014 թ-ի ընթացքում								Ընդամենը	
	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	Համակարգչի նորոգում և սպասարկում	Հատ		20%		25%		25%		30%		100 %	
2	Մանիտորի նորոգում և սպասարկում	Հատ		20%		25%		25%		30%		100 %	
3	Լազերային տպիչի նորոգում և սպասարկում	Հատ		20%		25%		25%		30%		100 %	
4	Սկաների նորոգում և սպասարկում	Հատ		20%		25%		25%		30%		100 %	
5	Պատճենահանման սարքի նորոգում և սպասարկում	Հատ		20%		25%		25%		30%		100 %	
6	Քարթրիջի լիցքավորում	Հատ		20%		25%		25%		30%		100 %	

Ընդամենը	X		X		X		X		X	

- *Գնումը կատարվում է վերանորոգման անհրաժեշտության դեպքում*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՏԱՐՈՂ

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի
նախարարության <<Սպորտի և
երիտասարդական ծրագրերի իրականացման
գրասենյակ>> պետական հիմնարկ
Հասցե՝ Սարյան 22, 16-փող հարկ
Հեռ. /095 95-81-05/
Հ/Հ 900011111110
ՀՎՀՀ 02599765
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Տնօրենի
Պաշտոնակատար_____Մ.Սարգսյան
Կ.Տ.

Հավելված N 3

<< >> << >> 2014թ. կնքված

N ՍԵԾԻԳ-ՇՀԾՁԲ-11/9 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

<< դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2014թ.՝ ընդ որում				
		I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	Ընդամենը Տարի
1	Համակարգչի նորոգում և սպասարկում	20%	25%	25%	30%	100%
2	Մանիտորի նորոգում և սպասարկում	20%	25%	25%	30%	100%
3	Լազերային տպիչի նորոգում և սպասարկում	20%	25%	25%	30%	100%
4	Սկաների նորոգում և սպասարկում	20%	25%	25%	30%	100%
5	Պատճենահանման սարքի նորոգում և սպասարկում	20%	25%	25%	30%	100%
6	Քարթրիջի լիցքավորում	20%	25%	25%	30%	100%

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՏԱՐՈՂ

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի
նախարարության <<Սպորտի և
երիտասարդական ծրագրերի իրականացման
գրասենյակ>> պետական հիմնարկ
Հասցե՝ Սարյան 22, 16-փող հարկ
Հեռ. /095 95-81-05/
Հ/Հ 900011111110
ՀՎՀՀ 02599765
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Տնօրենի
Պաշտոնակատար_____Մ.Սարգսյան
Կ.Տ.

Հավելված 4

<<____>> _____2014թ. կնքված

N ՄԵՍԻԳ-ՇՀՇՁԲ-11/9 ծածկագրով գնման պայմանագրի

Պատվիրատու	Կատարող
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<____>> <<_____>> 2014 թ.

Պայմանագրի անվանումը՝ _____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Գնորդը ի դեմս _____ և Վաճառողը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայության մատուցումները համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Մատակարարը__ _____ 20___թ-ից __ _____ 20__ թ. ընկած ժամանակահատվածում մատակարարել է հետևյալ ծառայությունները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Ծառայությունների մատակարարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը				

Վերոհիշյալ ծառայությունների մատակարարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը մատուցեց	Ծառայությունը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
Ազգանուն, Անուն	Ազգանուն, Անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված №5
<<ՍԵՄԻԳ-ՇՀՄՁԲ-11/9 >> ծածկագրով

ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

<<ՍԵՄԻԳ-ՇՀՄՁԲ-11/9>> ծածկագրով գնման

ընթացակարգին մասնակցելու դիմում

----------ընթացակարգի մասնակցի անունը (անվանումը)----------ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու ՀՀ սպորտի և երիտասարդության նախարարության <<Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի կողմից՝<<ՍԵՄԻԳ-ՇՀՄՁԲ-11/9>> ծածկագրով հայտարարված ընթացակարգի ----------չափաբաժնի(երի) համարը---------- չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի (ծանուցման) պահանջների համապատասխան ներկայացնում է հայտը:

----------ընթացակարգի մասնակցի անունը (անվանումը)---------- -ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

ընթացակարգի մասնակցի անունը (անվանումը) ---------- -ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

ընթացակարգի մասնակցի անունը (անվանումը)----------ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝

---------- մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե ----------
--

Մասնակցի (ղեկավարի) պաշտոնը, անունը, ազգանունը /ստորագրությունը/

ամսաթիվը, 2014թ.

Հավելված №5.1
<<ՄԵՍԻԳ-ՇՀՄՁԲ-11/9>> ծածկագրով

ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Գ ն ի ա ռ ա ջ ա ր կ

(ՀՀ դրամ)

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Արժեք	ԱԱՀ	Առաջարկված գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1				
2				
3				

**3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:*

***Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*

Մասնակցի (դեկավարի) պաշտոնը, անունը, ազգանունը /ստորագրությունը/

ամսաթիվը՝ամիսը, 2014թ.